ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1480 27.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՍ»
ՄՈՒՏՔ № 4301
28 10 2014

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ:

1. Ընդհանուր ՁՊՎ-ի տարածքում ջրամատակարարում չկար, բացի լոգարանից: Վարչակազմը մեկնաբանեց, որ ունեն տեղադրած ջրի բաք, որը միացրած է միայն սանհանգույցին: Դիտորդական խումբը միանշանակ չի կարող պնդել, բայց վարչակազմի մեկնաբանությունը բավարար հիմք ընդունել չի կարող, որովհետև ՁՊՎ-ի տարածքում գտնվող բուժսենյակը, ճաշասենյակը, խցերը համակցված են և չի կարող տվյալ բաքից ջուրը միայն սանհանգույցին միացված լինել: Ջրի բաքը ՁՊՎ-ի տարածքում չի գտնվում և այդ մասին դժվար է որևէ բան ասել:
2. Զուգարանի մասին խոսելն ավելորդ է, որովհետև թե՛ հակահիգիենիկ վիճակը և թե՛ տհաճ հոտը աննկարագրելի է: Զուգարանի օդափոխության համակարգը վնասված էր և չէր գործում: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2/*
3. Բուժսենյակը ոչնչով չի տարբերվում այլ խցերից: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 3/*
4. Առաջին խցի աղբամանի մեջ անհասկանալի պատճառով առկա էր չոր քլոր: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 4/*
5. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր կեղտոտ վիճակում: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 5,6/*

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՈՒՏՔ
8327
28 10 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./Ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3065 «25» 11 2014թ.

Ձեր 27.10.2014թ. թիվ 2621/1480 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Ոստիկանության Իջևանի բաժնի վարչական շենքի ջրամատակարարման բացակայության ժամանակ ՁՊՎ-ում մշտական խմելու ջուրը ապահովվում է բաժնի տանիքում տեղադրված ջրի բաքից, որը միացված է ՁՊՎ-ի լոգարանի ծորակին: Ջրամատակարարման բացակայության ժամանակ ՁՊՎ-ում պահվող անձանց ջրօգտագործման պահանջները բավարարվում են լոգարանի մշտական ջրով: Նշված բաքից խցերին ու մյուս սենյակներին ջուր մատակարարելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել կապիտալ շինարարական աշխատանքներ, ինչի իրագործումը ներկայումս հնարավոր չէ՝ ֆինանսական սուղ պայմաններից ելնելով:

2. Զուգարանում տհաճ հոտը վերացնելու նպատակով կատարվել են հիմնական մաքրման և ախտահանման աշխատանքներ, իսկ օդափոխության համակարգը փոխարինվել է նորով:

3. ՁՊՎ-ի բուժսենյակի դռան վրա արտաքին կողմից փակցված է <<Բուժսենյակ>> գրառումը, սենյակում առկա են մահճակալ՝ բժշկական սավանով, պատին ամրացված է դեղարկղը՝ սահմանված դեղատեսակներով, սեղան և 2 աթոռներ, ինչը լիովին համապատասխանում է ընդունված չափանիշներին: Ներկայումս բուժսենյակը գտնվում է բավարար սանիտարահիգիենիկ վիճակում, կատարվել են որոշակի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ:

4. 5. ՁՊՎ-ում կատարվել են մաքրման և որոշակի կոսմետիկ ներկման աշխատանքներ, խցերում աղբամանները փոխարինվել են նորերով: Ներկայումս ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում է չոր և մաքուր վիճակում:

ՀՀ ոստիկանության շտաբ